

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՎՈՎ ԱՌԱՋԻՆ
ԱՆԳԼԵՐԵՆ -ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Դարերի պատմություն ունեցող հայ բառարանագրությունը մեծ վերելք էր ապրում 19-րդ դարի վերջին քսանամյակում: Երկար տարիների դժվար պայքարից հետո աշխարհաբարը հաղթանակել էր և արդեն իշխող լեզու էր: Նոր բառարանների պահանջ էր զգացվում, այդ թվում երկլեզվյան – թարգմանական: Մեկը մյուսի ետևից հրատարակվում էին բառարաններ, որոնց հայկական մասի լեզուն աշխարհաբարն էր, որոշ բարբառային, իսկ արևմտահայ հատվածի համար՝ թուրքերեն բառերի խառնուրդով: Արևելյան Հայաստանում բառարանագրությունը զարգանում է հիմնա-կանում ռուսական ուղղությամբ, Արևմտյան Հայաստանի բառարանագրության կենտրոնը դառնում է Կ. Պոլիսը:

Ելնելով քաղաքական, սոցիալ–տնտեսական պայմաններից, ինչպես նաև Հայաստանում ոչ մի բարձրագույն ուսումնական և գիտահետազոտական հաստատություններ չլինելու պատճառով, բոլոր բառարաններն էլ ստեղծվեցին և հրատարակվեցին Հայաստանից դուրս՝ հայկական գաղթավայրերում:

Այդ բառարանները ի մի բերեցին տվյալ ժամանակաշրջանի երկու ժողովուրդների լեզվի բառապաշարը, բառային կազմը: Օգտագործված քերականական, ոճական և այլ կարգի նշումները որոշակի դեր կատարեցին հայոց գրական լեզվի կազմավորման և նորմավորման շրջանում՝ նպաստելով օտար լեզուների խորթ տարրերից նրա մաքրմանը:

Այդ բառարաններից մեկը Վ. Հակոբյանի¹ անգլերեն – հայերեն բառարանն է, որը հրատարակվեց 1892 թ. Կ. Պոլսում, որի տպագրումը հեղինակից պահանջեց 3 տարի: Բառարանը պարունակում է 55 000 բառ:

Դ. Ավգերյանի աշխատությունից հետո հրատարակվել էր միայն Ս. Սուքիասյանի անգլերեն–հայերեն–տաճկերեն բառարանների շարքը, որ ուներ դպրոցական – ուսուցողական բնույթ և հեղինակը հետապնդում էր միայն գործնական նպատակներ:

Հ. Ավգերյանի բառարանից հետո անցել էր արդեն քառորդ դար և ինչպես նշում է հեղինակն իր առաջաբանում, Ավգերյանի աշխատությունը այլևս իր նպատակներին չի ծառայում, չնայած, որ այն հոյակապ գործ է: Իր

¹ Վ. Յ. Յակոբեան, Բառարան Անգլիերենի ի հայ, Կ. Պոլիս, 1892:

հնացած քացատրությամբ, բառերի արտասանման ձևերով այն չէր բավարարում ժամանակաշրջանի պահանջները: Շատ անգլերեն և հայերեն բառեր հնացել և գործածությունից դուրս էին մնացել, իսկ որոշ բառեր վաղուց մուտք էին գործել լեզվի մեջ: Դ. Ավգերյանի բառարանը գրված էր գրաբարով, իսկ աշխարհաբարն արդեն հաղթել էր և իր հաստատուն դիրքը գրավել գրականության և կյանքի բոլոր ոլորտներում – «Ամիրաթեշտ էր դիւրատար, ծիշդ, արդեն աշխարհիկ լեզուաւ բառարանի մը պէտքն. առ այս ծեռնարկեցինք, ունենալով դառն փորձառութենն մեր ուսանողական շրջանին, յօրինել աշխարհիկ լեզուաւ, համածայն նորագոյն մեթոտի անգլիական բառագրո»²:

19-րդ դարի 70-80 թվականներին բուռն զարգացում էր ապրում ֆրանսահայ բառարանագրությունը: Եվ հեղինակը ցավով նշում է, որ անգլերենը «անդին կմնար», չնայած պակաս կարևոր չէր հայերի համար:

Արդեն հրատարակվել էին Ն. Բյուզանդացու, Ս. Նուպարյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Գ. Լուսինյանի, Կ. Ոսկրյանի ֆրանսերենին առնչվող բառարանները: Ամիրաթեշտ էր ստեղծել անգլերեն-հայերեն բառարան: Եվ ահա Վ. Դակոբյանը ծեռնարկեց այդ կարևոր, բայց և դժվար աշխատանքը:

Առաջաբանում հեղինակը խոսում է իր օգտագործած աղբյուրների և այն դժվարությունների մասին, որոնք ծառացել են իր առջև:

Վ. Դակոբյանը իր այս աշխատության անգլերեն բառացանկի համար աղբյուր է ընդունել Ռեբսթերի³ բառարանը՝ քիչ բացառությամբ: Օգտվել է նաև Դ.Ավգերյանի⁴ և Ս. Բաջունու⁵ բառարաններից:

Բառերի և դարձվածաբանական միավորների քանակով բառարանի բառացանկը գերազանցում է մինչ այդ հրատարակված անգլերեն-հայերեն բառարանները:

Բառարանը կազմված է ժամանակի բառարանագրության նվաճումներին համածայն, ինչը արտահայտվել է բառացանկի ընտրության, բառահոդվածի կազմության, բառիմաստների տարբերակման, բառի թարգմանության, քերականական, կիրառական և ոճական բնութագրումներում:

Բառարանն ունի հայերեն լեզվով առաջաբան, հավելված, այբբենական կարգով կազմված օտարազգի բառերի և արտահայտությունների բառա-

² Վ. Յ. Յակոբեան, նշված աշխատության էջ 2:

³ Webster's Condensed Dictionary

⁴ Դ. Դ. Սիգերեան, Բառարան Անգլիերեն և Հայերեն, Վենետիկ, 1868:

⁵ Ս. Բաջունի, Բառգիրք արուեստից, գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, հ.1, Վենետիկ, 1891, հ.2, Վենետիկ, 1892:

ցանկ, ինչպես նաև գրականության մեջ և մամուլում օգտագործվող անգլերեն հապավումների ցանկ:

Բառարանն ավարտվում է տղամարդկանց և կանանց անունների ցանկով: Օր.՝

Aaron էտր'ըն վեսն, պերճ. Սհարոն Ի. {ծոյ. Արդիէլ Ի.

Rosa րօ'զի. Վարդ. Վարդուհի Լ.

Բառարանը կազմված է այբբենական կարգով:

Բառացանկը ընդգրկում է ժամանակի կենդանի խոսակցական լեզվի գործնական, խոսակցական, բուսաբանական, կենդանաբանական, աշխարհագրական, կրոնական, երկրագործական, հանքային, գիտական և այլ բառեր: Բայց բառարանի բառացանկից դուրս են մնացել այնպիսի հեղափոխական բառեր, ինչպիսիք են՝ democracy, democrat, rebellion, rebellious, revolt, revolution, socialism, tyranny, tyrant և այլ բառեր (1907 թ. հրատարակության մեջ դուրս մնացին նույնիսկ communism, communist, community բառերը, իսկ 1912 թ. վերահրատարակության մեջ միայն revolution, revolt, tyrant, tyranny բառերը տեղ գտան հավելվածում):

Բառահոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. գլխաբառերի իմաստները տրվում են ըստ նրանց գործածության հաճախականության, այլ ոչ թե ըստ խոսքի մասերի (գոյական, ածական և այլն): Բառերի տարբեր իմաստները միմյանցից անջատվում են կետ-ստորակետ (;) նշանով (բացի take, turn, set, over և մի քանի այլ բառերի, որոնց տարբեր իմաստները առանձնանում են արաբական թվանշանով և կետով՝ 1., 2., 3. և այլն):

Գլխաբառից հետո տրվում է բառի արտասանությունը հայերեն տառադարձամբ, նշվում է բառի խոսքիմաստային պատկանելությունը, տրվում են այլ կարգի քերականական նշումներ: Այնուհետև բերվում են բառի թարգմանությունը, գլխաբառի հետ օգտագործվող նախդիրները և նրանց թարգմանությունը: Երբեմն նույն բառահոդվածում բերվում են բառի որոշ ածանցված ձևեր և բարդություններ: Տեղի խնայողության համար գլխաբառի փոխաբեն դրվում է - և ածանցը, նորից նշվում է խոսքիմաստային պատկանելությունը ապա թարգմանությունը: Բառահոդվածում մեծ տեղ է հատկացվում նաև դարձվածների, ոճական արտահայտություններին, կապակցություններին: Որոշ բառահոդվածներում բերվում են բառի իմաստները լուսաբանող օրինակներ:

Help հելբ (դ), va.Օգնել, նպաստել, օգուտ ընել; դարմանել, առողջացնել; խալըսել, ճարը գտնել; արգիլել: = vn. Օգնութեան հասնիլ; ինքզինքը զսպել; կերակուր բաժնել: = s.Օգնութիւն, նպաստ; օգուտ, դարման; օգնական, ծառայ:

Help! Օգնութիւն, հատք: Help yourself ! Հրամեցեք: To-out. (Ելլնելու, հասնելու) օգնել: To-over. (Ցատկելու՝ անցնելու) օգնել:

Both պողի, a. & pron. Երկուքն ալ: = con. pt ...pt ...= On-sides, երկու կողմյան: They are – guilty. Երկուքն ալ յանցաւոր են: Both young and old, pt մեծն և pt պզտիկը:

Հետեւելով անգլերեն բառի դիմաց հայերեն բառ տալու սկզբունքին՝ Հակոբյանը հրաժարվեց բառի թարգմանական կամ բացատրական եղանակից, բայց բառի հայերեն համարժեքների կողքին երբեմն տվեց նաև թուրքերեն համանշանակը:

Օր.² Loathe լող'ն, va. Ձգուիլ, նողկալ, ատել: Հախործիլ, գարշիլ, զանիլ թիքսիմեք:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում գլխաբառերին տրվող քերականական բնութագրումներին: Ջերականական նշումները կատարվում են գոյականների հոգնակի թվի՝ անկանոն կազմվող ձևերի, -f, fe վերջացող, հունարենից և լատիներենից փոխառյալ բառերի, ածականների համեմատության աստիճանի, դերանունների, բայերի, անկանոն, օժանդակ, մոդալ բայերի վերաբերյալ: Օր.՝

Mice մայս, pl. of Mouse

Wife ուայֆ, s. (Wives ուավզ)

Datum տեյ'դըմ s. (pi. Data) հիմնավետ, հիմ:

Better պետ'ըր, a (compl. of Good)

Best պեստ, (superl. of Good) a.

That տհեդ, pron. (pi. Those):

Go գո, vn. (Went, Gone):

Learn լըրն, va. (Learned or Learnt):

Will ուիլ (imp. Would) Պակասաւոր օժանդակ բայ, կը գործածուի Ապառնիին հետ, նշանակելու: 1.Ա. դեմքին հետ կամք, դիտաւորութիւն, խոստումնք: I will go. Պիտի երթամ:

Բառահոգվածում պատշաճ ուշադրություն է դարձվում նաև ոճական, իմաստային կիրառության նշումներին: Օր.՝

Michaelmas (մի'քլմես). S. Soն Սր. Միքայէլի (29 սեպտ.); աշուն:

Cradle որայակալ (Գերանդուղ):

Մասնագիտական տերմիններն անհրաժեշտության դեպքում տրվում են հատուկ նշումով՝ երկ., զին., իր., աշխ. և այլն:

Եթե բառն ունի բրիտանական և ամերիկյան ուղղագրական տարբերակներ, բառահոգվածում երբեմն տրվում են 2 ձևերն էլ: Օր.՝

Theater,- tre

Ax, Axe

Բայց միայն՝ Armor

Առանձին բառահոլովածներով տրվում են 2 տարբերակներն էլ:

Gipsy

Gypsy

Տեղի խնայողության համար հեղինակը օգտագործում է համառոտագրու-թյուններ՝ f., va., vn., pron., ad., վ., վիր., տ., ծղ., կ., ճ., ... և կրճատում որոշ հայերեն բառերի վերջածանցները: Օր.՝

Data pl. եղելութ., տեղեկութ.:

Առաջին անգամ անգլերենին առնչվող հայերեն բառարանում բոլոր տերմիններին Վ. Հակոբյանը տալիս է գիտական բացատրություն՝ «է բոյս ինչ», «է տունկ ինչ», «Տեսակ ինչ կապիկ» և այլ բացատրությունների փոխարեն: Օր.՝

Gail-tree, S. Հնդկարմա:

Agrimony, S. Երեսնակ գա.

Վ. Հակոբյանի այս արժեքավոր աշխատությունը կարճ ժամանակում ջերմ ընդունելության արժանացավ: Այն հեղինակի կողմից վերամշակվեց և վերահրատարակվեց 1907թ.⁶:

Բառարանը գոյության քսան տարվա ընթացքում ենթարկվեց ժամանակին համընթաց բարեփոխումների: Այն ընդարձակվեց հարյուրավոր նոր բառերով, բացատրություններով, ոճերով, հնչումով, հոմանիշներով և հակահիշներով, արվեստի և գիտական ոճերի ճոխ բառամթերքով և հրատարակվեց 1912թ.⁷: «... Ահա այս առաւելութիւններուն համար Ձեր Բառարանը կոչուած է վստահելի առաջնորդ ըլլալու Անգլիերէնի ուսանողներուն, ինչպէս և օգտակարապէս գործածելի նոյն իսկ գայն քաջ գիտցողներուն: Հետևաբար Ձեր այս գործով Անգլիերէն լեզուի ուսուցման հանրացումին և դիւրացումին մեծապէս նպաստած եղաք: Ատոր մեծ ապացոյցն այն է որ Ձերինէն վերջը հրապարակ եղածներուն շատը կա՞մ՝ անոր մէկ կրկնումն են և կա՞մ՝ անկէ օգտուած, որով իրաւամբ արժանի է Standard տիտղոսին⁸»:

Վ. Հակոբյանը հրաժարվեց գրաբարյան ձևերից, հնացած բացատրություններից, ինչպես նաև բառի թարգմանության նկարագրական ձևից՝ թարգմանությունը տալով հոմանիշային սկզբունքով: Հեղինակը Հ. Ավգերյանի

⁶ Վ. Յ. Յակոբեան, Նոր Բառարան Անգլիերէնէ Հայերէն, Կոստանդնուպոլիս, 1907:

⁷ Վ. Յ. Յակոբեան, Ռէպտղըրի ընդարձակ Անգլիերէնէ-Հայերէն Բառարան, Կոստանդնուպոլիս, 1912: Այս բառարանի նվիրատվությունը Հայաստանի Ազգային գրադարանին կատարվել է 1981թ. և այն չէր կարող ընդգրկվել Գ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմության» (1968թ.) հայ տպագիր բառարանների ցուցակում:

⁸ Վ. Յ. Յակոբեան, Ռէպտղըրի ընդարձակ Անգլիերէնէ-Հայերէն բառարան, Կոստանդնուպոլիս, 1912., Appreciations, Կ. Թումանյան, Չիկվել, Լոնտոն:

բառարանից չվերցրեց գործածությունից դուրս եկած ինչպես անգլերեն, այն-պես էլ հայերեն բառերը: Բառարանի բառացանկից դուրս մնացին շատ ու շատ կրոնական բառեր: Դրա փոխարեն բառարանի բառացանկ ներմուծվեց լեզվի մեջ ընդունված նոր բառեր և հասկացություններ: Եթե մինչ այդ հրատարակված անգլերեն-հայերեն բառարաններում որոշ տերմիններին տրվում էր անորոշ բացատրություն, ապա Հակոբյանը տվեց դրանց հայերեն համարժեքները:

Դեղինակը բառահոդվածում մեծ տեղ հատկացրեց դարձվածներին, ոճական արտահայտություններին և կապակցություններին:

Եթե ածանցված ձևերը և բարդությունները նախկինում բերվում էին առանձին գլխաբառերով, ապա Հակոբյանը դրանց մեծ մասը տվեց նույն բառահոդվածում:

Դեղինակը սկզբունքային է նաև գլխաբառերին տրվող քերականական և ոճական նշումների հարցերում:

Բառարանը որոշակի ծառայություն մատուցեց նաև հայոց գրական լեզվի կազմավորման և նորմավորման շրջանում:

Բառերի և բառիմաստների, դարձվածաբանական միավորների և կապակցությունների ընդգրկման ծավալով, բառիմաստի տարբերակմամբ և թարգմանությամբ, քերականական, ոճական, կիրառական նշումներով Վ. Հակոբյանի բառարանը աչքի ընկնող աշխատություն է հայ-անգլիական բառարանագիտության ասպարեզում:

Օգտագործված գրականություն

1. Վ. Յ. Յակոբեան, Բառարան Անգլիերենէ ի հայ, 4. Պոլիս, 1892:
2. Վ. Յ. Յակոբեան, Նոր Բառարան Անգլիերենէ-Հայերեն, Կոստանդնուպոլիս, 1907:
3. Վ. Յ. Յակոբեան, Ռէպտղոսի ընդարձակ Անգլիերենէ Հայերեն Բառարան, Կոստանդնուպոլիս, 1912:
4. Ս. Սաջունի, Բառգիրք արուեստից, գիտութեանց և զեղեցիկ դպրութեանց, հ. 1, Վենետիկ 1891, հ. 2, Վենետիկ, 1892:
5. Դ. Հ. Հիզերեան, Բառարան Անգլիերեն եւ Հայերեն, Վենետիկ, 1868:
6. Պ. Թորոսեան, Առ Զեռն Ամերիկեան Բառարան Անգլիերենէ Հայերեն, Նիօի Եօրը, 1899:
7. Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968:
8. Զարրիանայան, Պատմություն հայ դպրության, Վենետիկ, 1905:
9. Գ. Զարրիանայան, Պատմությունը հայկական տպագրության սկզբանակությունեն մինչև առ մեզ, Վենետիկ, 1895:
10. Կ. Կոստանյան, Հայագիտությունը Արևմտյան Եվրոպայում, Թիֆլիս, 1910:
11. Ս. Ղազինյան, Ցուցակ հայ մատենագիտության և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909-1912:
12. Webster's International Dictionary, Springfield, Mass.
13. The Concise Oxford Dictionary of Current English. New edition revised by H.W. Fowler, Oxford, 1929.